«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ
4 Հուլիսի 2024, N 13 - 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՄԲԻՈՆԻՆ ԱՐՏԱԺԱՄՅԱ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 6 - 9 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կայքում հրապարակվող նյութերի, «Messenger of ASUE» գիտական հանդեսի 3 անգլերեն համարի, «Տնտեսություն և հասարակություն» գիտական հանդեսի, «Ամբերդ» տեղեկագրի և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հրապարակումների եռալեզու հրատարակման նպատակով անգլերեն և ռուսերեն նյութերի մշակման և խմբագրական աշխատանքների ծավալի մեծացմամբ պայմանավորված՝ լեզուների ամբիոնին արտաժամյա բեռնվածություն սահմանելու և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2023 թվականի ապրիլի 18-ի N 6 - 9 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Լեզուների ամբիոնին տրամադրել 1000 ժամ՝ անգլերեն նյութերի և 780 ժամ՝ ռուսերեն նյութերի հրատարակման և խմբագրման աշխատանքների իրականացման համար:

2. Տրամադրված 1000 ժամը ներառել անգլերենի ոչ լսարանային ժամերի, իսկ 780 ժամը՝ ռուսերենի ոչ լսարանային ժամերի բեռնվածության մեջ:

3. Ուսումնական բաժնին՝ UMS հարթակում կատարել համապատասխան փոփոխություններ:

4. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2023 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հրատարակչական կարիքների համար լեզուների ամբիոնին արտաժամյա բեռնվածություն սահմանելու և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2022 թվականի հուլիսի 1-ի N 13 - 12 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 6 - 9 որոշումը:

5. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Վ. Գրիգորյան**

2024 թ. հուլիսի 4
Երևան